

16306

16307

16308

16309

16310

16311

16312

16313

89199

2-89

54

Handwritten notes in the top right corner, possibly including the word "W" and some illegible characters.

Handwritten notes in the middle right area, possibly including the word "W" and some illegible characters.

Հրատ. Փիլիպպոս Վարդապետանի

Բ Ա Յ Ր Ը Ն

ՇԻԼԻՈՆԻ ԿԱԼԱՆԱԻՈՐԸ

Թ ա ր գ մ.

Յովհաննէս Թումանեանց

Թ Ի Ֆ Լ Ի Ջ

Տպար. Յ. Մարտիրոսեանցի. | Типогр. И. Мартиросіанца.

1896

3609

Дозволено цензурою. Тифлисъ, 2-го марта 1896 года.

6827-17

ԲԱՅՐԸՆԻՆ

Ի՜նչ մեծ հանճարով, ո՞վ հսկայ պօէտ,
Ազատութիւնը կաշկանդող շղթան
Հաշտեցրել ես դու ազատ մարդու հետ
Եւ քաղցրացրել ես վիշտը գերութեան:

Ի՜նչպէս դարձրել ես բանտը հայրենիք
Եւ ողջ աշխարհը լախարձակ մի բանտ....

Ահա տանջանքի աշխարքում բընիկ
Մեծարում են քեզ որդիքը հիւանդ,
Եւ արտասուում են քո անմահ երգում,
Թէ ոնց է մարդու հողին խորտակում:

Յ. Թ.



ՅԻԼԻՈՆԻ ԿԱԼԱՆԱԻՈՐԸ

ՍՕՆԷՏ ՅԻԼԻՈՆԻՆ

Ո՛վ աղատութիւն—շունչ յաւերժական,
Բանտերումն ես դու շքեղ ճաճանչում,
Այնտեղ, ուր սիրտն է քեզ բընակարան,
Սիրտը, որ քո սէրն է միայն ճանաչում:

Եւ երբ որդիքդ զարկած շրջալի,
Անլոյս բանտերում նահատակելով
Փառաւորում են երկիրն հայրենի,
Ծաւալում ես դու հողմի թւերով:

Ջիլինն, քո բանտը մի սրբավայր է
Եւ քո տրխրալի յատակը—սեղան.
Բռնիվարն այնտեղ տանջւել, թողել է
Ոտնատեղերը քարերի վրան.

Եւ թող այդ հետքերն մնան անջնջում,
Որ բըռնութիւնից Աստուծ են կանչում:

I.

Գորշ են մաղերըս, բայց ոչ տարիքից,
 Ոչ էլ մի զիշեր եմ
 Այսպէս ճերմակել,
 Որ պատահում է յանկարծ երկիւղից.
 Իսկ անդամներըս այսպէս չորացան,
 Ոչ թէ բանելուց—այլ դարշ հանգըստից,
 Խաւարչտին բանտին երբ աւար դարձան:
 Եւ մի վիճակ էր ընկել եմ կեանքին,
 Որ կարօտ մնացի օդին, աշխարքին:

Բայց հօրս հաւատի համար արեցի,
 Որ մահ յանձն առայ, շրջաթայ կրեցի:
 Իմ հայրը այլեւց խարոյկի վերայ,
 Իւր դաւանանքը չուղեց ուրանայ.
 Նորա որդիքը նոյն բանի համար
 Օթեւան գտան բանտումը խաւար:

Եօթն հոգի էինք—մնացել եմ ես.
 Մէկը տարեւոր, վեցն երիտասարդ,
 Ինչպէս սկսեցին, վերջացրին այնպէս,

Հալածանքների սաստիկութեամբ հպարտ:
 Մէկը կրրակում, երկուսը կրուում
 Կնքեցին իրանց հաւատն արիւնով,
 Իրանց հօր նման մեռան անկոտորում
 Թշնամու մերժած Աստծու անունով:
 Վերջին երեքը բանտն էին ձգւած,
 Որոնցից ես եմ մնացել հիմի—
 Հաշմացած բեկորս մեր անբաղդ տոհմի:

II.

Այնտեղ, հին ու խոր բանտում Ջիլիոնի
 Եօթը հատ սիւններ զոթական ձևի,
 Եօթը հաստ սիւններ ծանր ու դորշադոյն
 Թողլ երևում են շողովը տըժգոյն,
 Որը կարծես թէ ճամբան մոլորել,
 Պատի ճեղքիցը պատահմամբ ընկել,
 Խոնաւ յատակին խաղում է տխուր,
 Ինչպէս ճահճային աղօտ մոլեհուր:

Ամեն սիւնի մէջ այնտեղ մի օղ կայ
 Եւ ամեն օղակն ունի մի շրջաթայ:
 Սոսկալի բան է երկաթի շրջաթան,—
 Ուտում են նրա ժանգ ժանիքները.
 Նրանք մաշելով մարմնիս մէջ մըտան,
 Եւ չեն ջնջւելու նրանց հետքերը,

Մինչև չըթողնեմ օրւան լոյսը վառ,
Որ անսովոր է աչքերիս համար,
Որոնք, չըզիտեմ թէ քանի տարի,
Ձեն տեսել պայծառ երեսն արևի:
Այդ տարիների չեմ լիշում թիւը.
Թողեցի նրանց դանդաղ հաշիւը
Այն օրից, երբ որ եղբայրըս վերջին
Թոշնեց ու մեռաւ աչքիս առաջին,
Եւ նորա կողքին ես էլ կենդանի
Կիսամեռ ընկած չարչարում էի:

III.

Նրանք սիւներին մեզ շղթայեցին.
Մենք ջուկ ջուկ էինք—թէեւ միասին:
Մենք չէինք կարող ոչ մի քայլ անել
Ոչ իրար երես մըթնումը տեսնել,
Աղօտ, կապտաւուն այն լոյսն էլ որ կար,
Մեզ մեր աչքերում դարձրեց օտար:
Այսպէս միասին, բաց ջուկ ջուկ կապած,
Ձեռքերով հեռու, սրբտերով կրպած,
Մի մըխիթարանք միայն ունէինք,
Որ մէկգմէկի ձայն իմանում էինք.
Էլ ուրիշ այնտեղ մեզ վայելք չըկար,
Եւ մէկըս միւսին դարձանք մըխիթար

Նոր նոր յոյսերով, կամ թէ հին վէպով,
Կամ հերոսական անվեհեր երգով:
Սրանք էլ սակայն սառեցան վերջում.
Տըխուր էին մեր ձայները հնչում.—
Այն արձագանքն էր բանտի քարերի,
Մի խռիոտ հնչիւն, ոչ ազատ ու լի:
Գուցէ ցնորք է, բաց իմ ականջին
Հէնց այնուհետև օտար հրնչեցին:

IV.

Մեր մէջ երեքից մեծը ես էի.
Ես պէտք է նրանց խրրախուսէի:—
Սիրտ էի տալիս, յուսով պահպանում,
Եւ ամեն մէկն էլ որքան կարենում
Ինձ պէս էր անում:

Կըրտսերը, որին հայրըս սիրում էր,
Որ մեր հանդուցեալ մօր ձակատն ունէր
Եւ աչքերն-ինչպէս կապոյտը երկնի,
Նա էր իմ հոգին տանջում աւելի:
Իրաւ, տեսնելով մարդ չէր զիմանում,—
Այնպիսի թըռչնակ այնպիսի բընում. . . .
Նա գեղեցիկ էր, պայծառ ու մաքուր
Եւ ուրախ, զըլարթ սրտով բընատուր.
Ուրիշի վըշտի համար արտատում,

Արցունքն առակի նրման էր հոսում,
Եթէ չէր հասնում տանջանքն ամոքում,
Որ չէր կարենում տեսնել աշխարհում:

V.

Միւսն էլ նրա պէս հոգով անարատ,
Բայց թէ ծնած էր կռուղ-տղամարդ:
Հուժկու էր կապտով, և միշտ ուրախ էր
Աշխարքի ընդէմ մենակ խիղախէր,
Միայն թէ չըհեծէր շրջթալի տակին,—
Նորա ձայներից մարում էր հոգին:
Նա լուռ էր, սակայն ընկնում էր արդէն.
Ես էլ թերեւս ընկճւած նոյնքան,
Բայց ճգնում էի, որ սրտապնդւեն
Վերջին բեկորներն թանկագին մեր տան:
Որսկան էր եղբայրս. լեռներում հեռու
Որսում, քշում էր գալլ ու եղջերու.
Այժմ անգունդք էր բանտը իւր համար,
Իսկ շղթան—ամեն չարիքից վատթար:

VI.

Լեմանի կապույտ ջրերն ողորդում
Ջիլիոնի պատերն, ծփում են, խաղում

Հազար ոտնաչափ խորութեան վրայ.
Այսքան ձգւում է գունտը կապարեայ *)
Ջիլիոնի ճերմակ պարիսպներից ցած,
Որոնք չորս կողմից ջրով են պատած:
Ջրերն ու պատերն այնտեղ միացել,
Կրկնակի ամուր բանտ են ստեղծել,
Եւ զիշեր-ցերեկ այն մութ նկուղում,
Որ մեզ կենդանի շիրիմ էր թվում,
Մենք լսում էինք մեր գլխի վերև
Խուլ շառաչիւնը, ծփանքն յարատւ:
Եւ ձմեռն երբոր մըրրիկն ահագին
Ջարկում էր ջուրը մեր լուսամուտին,
Յայտերն այնտեղից մեզ էր հասցնում
Եւ ջինջ երկնքի տակին խաղացնում՝
Գողգոթում էին պատերը հիմքից.
Այդ ըզգում էի ես առանց ահի,
Եւ խնդում էի, թէ արդէն հիմայ
Հասաւ փրկարար վայրկեանը մահի:

VII.

Խամրում էր միջնակ եղբայրս, ասացի,
Մաշւում էր նորա սիրտը առնացի:
Էլ չէր կամենում կերակուրն ուտել,
Բայց ոչ նրա համար, թէ կոշտ ու վատ էր.

*) Լօտ, որով չափում են ջրերի խորութիւնը:

Մենք սովոր էինք որսորդի կեանքի
 Ապա և կարօտ սակաւ խնամքի:
 Այծերի կաթը Ալպեան լեռների
 Դարձել էր հոտած ջուրը ջրհորի,
 Իսկ մեր հացն այն էր, որ շատ դարերով
 Թրրջել է գերին արտասուքներով
 Այն օրից, երբ մարդն իւր ընկեր մարդուն
 ձրղթալով կապեց ինչպէս անասուն:
 Բայց թէ մեզ համար դրանք ի՞նչ էին.
 Դրանք չի եղբօրս հոգին ընկճեցին.
 Իմ եղբօր սիրտը այնպիսի սիրտ էր,
 Որ պալատումն էլ դարձեալ կը փթէր,
 Թէ արդելէին թարմ օդում շրնչել,
 Ազատ, զառիվալը լեռներում շրրջել:
 Ինչ երկարացնեմ—նա մեռաւ. տեսալ,
 Բայց չըկարացի գլուխը պահել,
 Ոչ էլ մեռնելիս կամ մեռած հասալ,
 Որ կարենայի գէթ ձեռքը բռնել,
 Թէև շատ էի տանջւում, աշխատում,
 Եւ իզուր շղթաս կրծում, կտրատում:
 Նա մեռաւ. նրանք կապանքը վերցրին,
 Հէնց այնտեղ բանտում—աչքիս առաջին
 Մի փոս փորեցին սառն ու երեսանց....
 Ես աղաչելով խնդրեցի՝ նըրանց,
 Որ շնորհ անեն թաղել այնտեղում,
 Ուր որ ցերեկւան ճաճանչն է շողում:

Այս մի խելագուրի, մի տխմար միտք էր,
 Բայց այն ժամանակ գլուխս էր մըտել՝
 Թէ ազատ ծնւած, ազատ սովորած
 Իմ եղբօր սիրտը, թէպէտև մեռած,
 Զի հանգստանալ այնպիսի բանտում:
 Բայց իզուր էի այնքան պաղատում.
 Նրանք ինձ վրայ սառը խնդացին,
 Եւ մեր սիրելի եղբայրը կըրկին
 Այն պաղ, անդալար հողում թաղւած է
 Եւ նրա գըլխի վերև կախւած է
 Բրուսակալներին վայել յուշարձան—
 Եղբօրըս կրած ու թողած շղթան:

VIII.

Իսկ մեր ծաղիկը—փոքրը մեղանից,
 Ամենքից սիրւածն իւր ծընւած ժամից,
 Իւր սիրուն դէմքով մեր մօր պատկերը,
 Մեր գերդաստանի մանկական սէրը,
 Նահատակ մեր հօր ցնորքը նւիրական
 Եւ իմ հոգսերի վերջին առարկան,
 Որի համար միայն ինձ պահում էի,
 Որ նրան ուրախ գէթ մի օր տայի.
 Նա, որ գեռ հոգին պահել էր այնպէս
 Տակաւին զըւարթ,—գուցէ առերես,

Նա էլ խորտակեց,— օրէցօր և՛ նա
Սկսեց թառամել ցօղունի վրայ:

Օ՛, Աստուծ, Աստուծ, սոսկալի բան է
Տեսնել մարդկային հոգին դուրս գալիս,
Որտեղ որ լինի, ինչ կերպով լինի.—
Ես այն տեսել եմ դաշտումն արիւնի,
Տեսել եմ խեղդողն ինչպէս է կուռում
Ալիքների հետ կատաղի ծովում,
Տեսել եմ հիւանդն անկողնի միջին
Ջառանցանքներով տանջւելիս վերջին....

Բայց այնտեղ սարսափ, իսկ այստեղ վիշտ կար,
Գալիս էր մահը դանդաղ և յամառ:
Այնքան հեղ, խաղաղ էր նա թառամում,
Լուռ, մեղմիկ հալւում, և ուժաքամում,
Առանց արցունքի, քնքոյշ ու բարի.
Միայն թողածների համար էր ցաւում.
Եւ կարմրութիւնը նորա այտերի,
Որ գերեզմանն էր կարծես թէ ծաղրում,
Մարող ծիածանի գոյների նըման
Թռաւ, դալկացաւ,— այտերը հանդան,
Բայց աչքերն այնքան պայծառ էին որ,
Ասես թէ բանտը դարձրին լուսաւոր:
Եւ ոչ մի տրտունջ, մի «ախ» չարաւ նա
Իրան վաղաժամ օրհասի վրայ:
Մի փոքրը խօսաց անցած օրերից,
Մի քիչ ըսիովեց, յոյսեր տւեց ինձ,

Որովհետեւ ես վշտից քարացել—
Կորուստիս առաջ լուռ էի կացել:
Ապա թառանջը, որ զսպում էր նա,
Արդէն երկարեց, նըւագեց հիմայ....
Ականջ դրեցի— չէր լսում իսպառ.
Խեղադարելով ձայն տւի նրան.
Թէեւ գիտէի, որ էլ յոյս չըկար,
Բայց չէի ուզում հաւատալ սրան:
Կանչեցի— կարծես մի ձայն լրտեցի.
Ուժգին ցնցումով շղթաս կտրեցի,
Ընկայ նրա մօտ— նրան չըգտայ....

Ես էի մենակ մըթնումը շարժւում,
Ես էի ապրում, ես էի շրնջում
Անիծած օղը մեր խոնաւ բանտի:
Ճակատագրական այս տեղում կտրեց
Յաւիտենական սահմանի— իմ մէջ
Միակ, թանկագին և վերջիմ օղը—
Հատնող տոհմիս հետ ինձ միակ կապողը:

Մինը գետնի վրայ, իսկ միւսը տակին
Երկու եղբայրս էլ վախճանաւ էին.
Ընկած չոր ձեռքը վերցրի և, աւաղ,
Նրա չափ նոյն իսկ իմ ձեռքն էլ էր պաղ:
Ուժ չըկար շարժեմ, կամ մի ճիգ անեմ,
Միայն զգում էի, որ դեռ ապրում եմ,
Եւ ցընորելով գիտէի, որ նա,
Որ սիրում էի, այլևս չըկայ:

Չրգիտեմ ինչու չէի ես մեռնում.
Երկրում ինձ համար էլ յոյս չէր մնում.
Հաւատս էր մնացել, և մենակ այն էլ
Ինձ արգելք եղաւ ինքնասպան լինել:

IX.

Ապա թէ այնտեղ ինձ ինչ պատահեց,
Այդ ես ոչ գիտեմ և ոչ իմացայ,—
Դեռ օդը հատաւ, լոյսը պակասեց,
Եւ մըթութեանը յետոյ խորթացայ:
Ոչինչ զգացում, ոչ միտք ունէի.
Քարերի միջին կանգնած քար էի:
Չէի հասկանում ինչ էի ըզգում.
Իբրեւ մի լերի ժայռ դադաթը միզում:
Ամեն բան դատարիկ, մռայլ ու դորշ էր.
Ոչ ցերեկ էր այն և ոչ էլ գիշեր,
Ոչ էլ իմ բանտի նսեմ լոյսը կար,
Այնքան ատելի աչքերիս համար.—
Մի տարածութիւն—դատարկութեամբ լի,
Եւ հաստատութիւն—առանց մի տեղի....
Չրկային աստղեր, ժամանակ, աշխարհ,
Ոչ փոփոխութիւն, ոչ բարի, ոչ չար.
Լռութիւն կատարեալ, և կանգնած օդում
Ոչ մահաւան նշոյլ, ոչ կեանք էր նկատում.

Այն անդործութեան մի ծով էր կանգուն,
Անշարժ ու համբը, խաւար և անհուն....

X.

Բայց ահա մի շող ցոլաց իմ գլխում.—
Այդ մի գեղեցիկ թռչնակի երգ էր:
Նա մերթ լուռ էր, մերթ նորից երգում.
Այնքան քնքոյշ երգ մարդ չի լսել դեռ.
Եւ մինչ ականջըս լսում էր երգչին
Ուրախ դարմանքով աչքերս լցեցին,
Եւ ես միառժամ չէի նրկատում
Թշուառութիւնս—ընկերս բանտում:
Բայց շուտով միտքս սովոր ընթացքով
Երբ վերադարձաւ, իրական աչքով
Հուրջս, վերեւ ես տեսայ կրկին
Պատերն, օճորքը,—նկուղը մըթին,
Առաջայ նման ուր որ հաղիւ հաղ
Արեւի շողքը ընկնում էր նրազ:
Բայց և այն ձեղքում, որ ընկնում էր նա,
Աւելի հանգիստ քան ծառի վրայ
Նստած էր թռչնակն ուրախ և անփոյթ.
Մի սիրուն թռչնակ, թիւերը կապոյտ:
Հաղար դանազան բաների վրայ
Դալլալում էր նա,

Եւ ինձ էր ասում կարծես բոլորը.
 Եւ ոչ միանգամ մինչև այն օրը
 Նորա նմանը տեսած չէի ես,
 Ոչ էլ կրտսեանս.—նա էլ էր կարծես
 Ինձ նման մենակ, զրկւած ընկերից,
 Բայց իմ կիսի չափ չէր զգում կսկիւծ:
 Նորա համար էր նա եկել մենակ,
 Որ մխիթարի ինձ որք ժամանակ.
 Եւ զեղբեղելով մութ բանտիս ծայրից
 Կենդանացնում էր իմ սիրտը նորից:

Բայց ո՞վ էր ինքը—իմ հիւրը երգիչ.
 Արդեօք երկընքի ազատ բընակիչ,
 Թէ իւր վանդակից հէնց նոր ազատուել—
 Եկել էր իմիս վերևը նըստել.
 Չըզիտեմ,—բայց թէ քաշած գերութիւն,
 Քեզ չէի ցանկալ նոյնը իմ թռչուն:

Սակայն թերևս թռչնի կերպ առած
 Մի այցելու էր դըրախտից թըռած.
 Այս միտքը այնժամ, թող ներէ Աստուծ,
 Ինձ տւեց անչափ և հրճանք և լաց.—
 Մտածում էի, թէ նա իմ կարօտ
 Եղբօր հոգին էր, եկել էր ինձ մօտ:
 Բայց յանկարծ թռաւ, և ես իմացայ,
 Որ մի հոգեղէն արարած էր նա....
 Մի՛թէ եղբայրս կըթռչէր այնպէս

Եւ ինձ կըթողնէր մենակ նորից նոր,
 Ինչպէս պատանում փաթաթած մեռել,
 Ինչպէս երկնքում մի ամպի կըտոր,—
 Սև խորշոմ զւարթ երկրի վերևում,
 Որ պարզ երկնքում զուր է երևում:

XI.

Վիճակըս փոխեց այն ժամանակից.
 Պահապաններն զարձան կարեկից:
 Չը գիտեմ ինչու մեղմացան նրանք,
 Որ սովոր էին տեսնել չարչարանք,
 Բայց այս այսպէս էր: Ոչոք իմ կըտրած
 Չըղթան չըկապեց, այնպէս էլ մընաց:
 Եւ շրջում էի իմ բանտում ազատ,
 Ողջ երկարութեամբ—մի պատից մի պատ,
 Երկայնքով—լայնքով, շուրջը սիւների,
 Դարձեալ ըսկսած տեղս էի գալի,
 Որտեղից գնում էի շըրջելու—
 Մի՛շտ եղբայրներիս շերիմից հեռու....
 Եւ երբ թփում էր, անդդոյշ քայլով
 Պղծեցի նըրանց հանդիստը տխուր,
 Դողդողում էի արագ հեալով,
 Եւ սիրտս ցաւից ճմլում էր ամուր:

Ես ոտնատեղեր փորեցի պատում,
 Սակայն փախչելու չէի աշխատում:
 Ես թաղել էի արդէն բոլորին,
 Որոնք աշխարքում ինձ սիրում էին,
 Եւ այնուհետեւ աշխարքն ինձ համար
 Նոյնպէս մի բանտ էր, բայց մեծ ու անծայր:
 Ի՛նչ ոչոք չըկար այնտեղ ինձ մօտիկ—
 Հայր, մայր կամ եղբայր, ընկեր կամ որդիք:
 Համբերութիւն էր այս միտքն ինձ տալիս
 Թէ չէ կը թռչէր խելքըս !իշելիս:
 Ես ուզում էի միմիայն բարձրանալ
 Վանդակով փակած լուսամուտներին,
 Այնտեղից հանդիստ միանգամ դարձեալ
 Հրճանքով նայել բարձրը լեռներին:

Ես տեսայ նրանց. նրանք նոյնն էին
 Եւ չէին փոխւել նրանք ինձ նրման.
 Կրրկին դարձոր ձիւնը դըլխներին,
 Ներքեւ մեծ վճը, կապտաջուր Ռոնան....:
 Լըսեցի,—ջրերն աղմըկում էին

Մացառուտներում, ժայռերի միջին.
 Ճերմակ պարսպով տեսայ քաղաքը,
 Եւ լճում հանդարտ սահող նաւակը
 Թեթեւ, ձիւնափայլ առազաստը բաց:
 Յետոյ այնտեղ ցած
 Մի մենակ, փոքրիկ կըղզի կար կանաչ,
 Կարծես ժպտում էր նա աչքիս առաջ:
 Բանտիս լատակից մի քիչ մեծ կըղար,
 Բայց բուսել էին վրբան երեք ծառ:
 Լեռնային հովը փչում էր այնտեղ,
 Ափերին վըճիտ ջրերըր ծըփում,
 Եւ թարմ դալարի միջում գունազեղ,
 Քնքոյշ, հոտաւետ ծաղիկներ ծաղկում:
 Բանտի պատի տակ ձրկան մի վտառ
 Լողում էր սնչափ ուրախ ու կայտառ.
 Թագաւորում էր արծիւն վերւում,
 Եւ թռիչքն աւելի ուժգին էր թվում
 Երբ յանկարծակի ուղղում էր դէպ ինձ:
 Աչքերս արցունքով լցեցին նորից,
 Եւ այնպէս թախիժ տիրեց իմ սրտին,
 Գրեթէ ցաւեցի, որ լուսամուտին
 Եկայ մօտեցայ իմ շրդթան թողած:
 Իսկոյն շտապով իջայ դալձեալ ցած,
 Եւ մռայլ բանտիս խաւարը ահա
 Ծանր ճնշելով չոքեց ինձ վրայ,
 Թարմ շիրիմն ինչպէս կարող է ծածկել

Մէկին, որ դուր ենք աշխատում փրկել:
Այն ինչ հայեացքըս գրգռած ուժից վեր,
Այս հանգստութեան կարիքը ունէր:

XIV.

Ամիսներ, տարիք, թէ օրեր անցան,
Ես ոչ հաշուել եմ և ոչ իմացել.
Մութն էր իմ բանտը, տխուր մշտական,
Եւ երբէք պայծառ յոյս չեմ ունեցել:
Վերջապէս եկան ինձ ազատելու.
Ես չըզիտէի—ուր եմ գրնալու,
Ոչ նրանց հարցրի—ուր են ազատում.—
Ինձ համար մին էր, ազատ թէ բանտում:
Ես վաղուց էի բանտին սովորել,
Սովորել էի տանջանքը սիրել:
Եւ այնժամ մարդիք իմ բանտի միջին
Ելբ արձակեցին կապանքըս վերջին,
Այնպէս էր թվում, թէ նրանք եկել,
Ուզում էին ինձ բաժանել, զրրկել
Իմ երկրորդ տանից: Ես մինչև անգամ
Այնտեղ սարդերին դաքձայ բարեկամ.
Եւ միշտ ուշադիր հետևում էի,
Երբ խորասուզւած նրանք տխրալի
Իրանց արհեստով էին զբաղում.

Կամ նայում էի, երբ մուկն էր խաղում
Լուսնի լուսի տակ: Եւ ինչու նրանց պէս
Ինձ էլ մեր տանը չըզգայի և ես:
Մենք բնակիչներ էինք ողջ մի տան
Եւ ես բոլորի պետը անսահման.
Ամենքի մահւան վրձիւն իմ ձեռքում.
Բայց, զարմանք բանէ, հաշտ էինք ապրում.
Նոյն իսկ շղթայիս դարձայ ես ընկեր....

Այսպէս,—մընալով օրեր, տարիներ,
Հնոտեանում է մարդ իւր վիճակին.—
Եւ հառաչեցի ես բանտիս շէմքին,
Երբոր թող արած շղթայ ու տանջանք
Դուրս էի գալիս դէպի ազատ կեանք:



1. Դրոշմայ Դ. — Կրթիչ Աղեկայ Արքայուն 56
2. Օրվել Կ. Ը. — Գրողական ժամանակագրություն 874
3. Քեֆեշեյան. — Ցանկ և ողբեր 36
4. Թումանյան Խ. — Դարձակներ 40
5. Արմենակյան — Շարուն/Քի Կոյա 46
6. Ֆրաթ — Գրքայան Բայր 40
7. Լարսե — Ժողով Կոմիտե 40
8. Բայր — Զեյթունի Կալանդար 28

16306-16313

208

ՀՀ Ազգային գրադարան



NL1333894 1

ՀՀ Ազգային գրադարան



NL1333893 4

89

